ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 9 հունիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Կ. Բալայանի

Ուսումնասիրելով քաղաքացիներ Ջուլիետա Մարտիրոսյանի, Քրիստինա Մարկարովայի և Միրան Մարգարովի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ Ջուլիետա Մարտիրոսյանը, Քրիստինա Մարկարովան և Միրան Մարգարովը դիմել են ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի մայիսի 19-ին)՝ խնդրելով.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածի 3-րդ կետը, 231 հոդվածի 4-րդ կետը (Փաստաբանի մասով), ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 233 հոդվածի 3-րդ կետը (Դատարանի կողմից սահմանված ժամկետը) ճանաչել ՀՀ սահմանադրությանը հակասող և անվավեր: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին կետը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածները ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր՝ այնքանով, որքանով ժամկետի բացթողումը հարգելի կամ անհարգելի ճանաչելու (գնահատման չափանիշներ ընտրելու) դատարանի լիազորությունը կրում է հայեցողական բնույթ, և դատավարական գործողության կատարման բաց թողնված ժամկետը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 77 հոդվածի հիմքով մերժելու վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման, հետևաբար՝ այդ ակտի հիմնավորվածությունը (օրինականությունը) վիճարկելու իրավական հնարավորություն չեն նախատեսում, և չեն ապահովում Դատարանի «Բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշման, և բաց թողնված դատավարական ժամկետների բողոքարկումը, ապահովելով բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնման հնարավորությունը»:

1. Դիմողները գտնում են, որ դատարանի կողմից իրենց բողոքն առանց քննության թողնելու որոշումը կատարվել է քաղաքացիադատավարական իրավունքի խախտմամբ, որի արդյունքում խախտվել են իրենց սահմանադրական իրավունքները՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման, դատարանի մատչելիության իրավունքի ոչ համարժեք սահմանափակման և, այդ ամենով հանդերձ, ստեղծելով լուրջ խոչընդոտներ իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ իրականացման գործում:

Դիմողներն իրենց դիմումում ներկայացրել են նաև այլ փաստարկներ:

Դիմողները միաժամանակ ներկայացրել են միջնորդություն պետական տուրքի վճարումից ազատելու մասին:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

2.1. դիմողների կողմից վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասի, 231-րդ հոդվածի 4-րդ մասի և 233-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները նրանց նկատմամբ կիրառվել են ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 23-ի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմում կարող է սահմանադրական դատարան ներկայացվել ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից՝ իր հանդեպ կիրառված դատական ակտի վիճարկման հնարավորությունները սպառելու պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

Հետևաբար, նշյալ հոդվածների մասով առկա է անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմք.

2.2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին կետի վերաբերյալ դիմողները չեն ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ նշված օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողները չեն հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իրենց սահմանադրական որ իրավունքներն են խախտվել, ինչպես նաև չեն հիմնավորել իրենց սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Բացի դրանից, դիմողների համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրանց նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են: Հետևաբար, վերոնշյալ դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողներն ընդամենը բարձրացնում են դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել այդ դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Հետևաբար, առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք.

2.3. դիմողների կողմից վիճարկվող դրույթներից՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. ապրիլի 22-ի ՍԴՈ-752 որոշումը, ինչը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի, անհատական դիմումի քննության ընդունումը մերժելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացիներ Ջուլիետա Մարտիրոսյանի, Քրիստինա Մարկարովայի և Միրան Մարգարովի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

9 հունիսի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/2-16